

ՆՈՐՎԱՆ ԵՊԻՍԿՈՊՈՍ ԶԱՔԱՐՅԱՆ*Արևմտյան Եվրոպայի Հայրապետական**Պատրիարքի փոխանորդ***ՄՐՏԻ ԽՕՍՔ****Ն.Ս.Օ.Տ.Տ. ԳԱՐԵԳԻՆ Բ. ԱՄԵՆԱՅՆ ՆԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ
ԳԱՆԱԿԱՆՈՒԹԵԱՆ ԱՌԻԹՈՎ**

Ժողովրդավար սկզբունքներու վրայ հիմնուած, և դեռ աւելի արդար հայ աշխարհ մը կերտելու յոյսը չքացած չէ բնաւ երրորդ հազարամեակի մուտքին, մանաւանդ երբ մարդկային ջանքերուն միանալու է աստուածային շնորհքը: Սաղմոսագիրքը այս մասին իրաւամբ կ'ըսէ. -«Եթէ ոչ Տէր շինէ զտուն, ի նանիր վաստակին շինողք նորա» (Սաղմ. 126):

Հայ Եկեղեցին, Սաղմոսերգուին այս տողերու ճշմարտութեան հաւատարիմ, նոր հազարամեակին դիմաց կանգնած, իր նոր Կաթողիկոսին՝ Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ. Ամենայն Հայոց Վեհափառ Հայրապետին առաջնորդութեամբ, վստահաբար պիտի ջանայ սաղմոսի յայտնի ճշմարտութիւնը փոխանցելու բոլոր անոնց, որոնք այսօր հարց ունին Հայաստանին և Սփիւռքին նոր հիմքեր տալու: Հիմքեր՝ որոնք պիտի օգնեն հազարամեայ այս երկրին, իր պատմութեան հարուստ ակունքներէն դուրս բերելով անոր կարողութիւնը, որ արմատացած է իրեն յատուկ աւանդութիւններու մէջ, որպէսզի շնորհիւ այդ կարողութեան՝ այսօրուան հայ աշխարհի կարիքներուն յաջողի իր լուծումները բերել, աշխարհի մը՝ որ զարգանալու և փոխուելու նոր ընթացքի մէջ կը գտնուի, հեռացնելով միաժամանակ անցեալից ժառանգութիւն մնացած տխուր երևոյթները:

Հայոց բազմաչարչար պատմութեան մէջ, քրիստոնէութիւնը յատկանշական և կարևոր տարր մը կը ներկայացնէ, մանաւանդ պետական կրօնի հռչակմամբ, որու շնորհիւ հասարակութեան աշխարհայեացքը հատատուեցաւ բարոյական և մարդկային նոր սկզբունքներու վրայ, սատարելով նոյն ատեն մշակութային և ազգագրական շարժումներու՝ որոնք իրարու յաջորդեցին դարերու ընթացքին: Քրիստոնէական հաւատքը ձևաւորեց հայ ժողովուրդի մշակոյթը, և անկաւ անքակտելի կերպով մը խառնուեցաւ մեր պատմութեան: Տեղի ունեցաւ այնպիսի միախառնութիւն մը հաւատքի և պատմութեան միջև, որ դժուար է հասկնալ առանց յղուելու այնտեղ պատահած դէպքերուն, աւետարանումի առաքելական շրջանէն սկսած մինչև յետագայ դարերը: Այնպէս որ քրիստոնէութիւնը դարձաւ Հայաստանի կրօնք, հայու իսկ կրօնքը:

19-րդ դարու վերջին սկսուած աշխարհականացման շարժումը ճեղք մը բացաւ մշակոյթի և հաւատքին միջև. այս վերջինը՝ միշտ պահեց իր ցայտուն դերը: Այսօր նոյնպէս Հայաստանի՝ դէպի փայլուն ապագայ ճանապարհը անցնելու է հաւատքի իրականութենէն:

Նորընտիր ու երիտասարդ Կաթողիկոսն Ամենայն Հայոց Ս. Տ. Գարեգին Բ. կոչուած է նորոգել տալու մեր բարեպաշտ ժողովրդեան քրիստոնէական գիտակցութիւնը: Երիտասարդ ըլլալը առաւելութիւն մըն է, որովհետև այդ հանգամանքը եկեղեցական կեանքի առաքելութիւնը կազմակերպելու լայն առիթ կրնայ տալ Հովուապետի մը: Հաւատացեալ հայորդիները, աշխարհով մէկ ցրուած, պարտականութիւնն ունին, Մայր Աթոռ Ս. Էջմիածնով և իր Գահակալով, Հայաստանի կառուցման իրենց մասնաւոր բաժինը բերելու, որպէսզի Աւետարանի լոյսին տակ նորոգուի թէ՛ Հայաստանի ընկերային ներքին կեանքը, և թէ՛ Սփիւռքի ներազգային կազմաւորումը: Հայերը պէտք է շարունակողները ըլլան սրբութեան այն երկա՛ր պատմութեան, որ անցաւ Հայկական Բարձրաւանդակի զանազան շրջաններէն, անցնող երկու հազարամեակներու ընթացքին, ուր Նարեկացիներու նման սուրբերը դարձան գագաթներ և կազմեցին Հայ Եկեղեցւոյ փառքը, օրինակ հանդիսանալով մեզմէ ամէն մէկուս: Արդարև, կան բազմաթիւ հաւատացեալներ, որոնք իրենց ուղիղ և պատուաւոր կեանքով, ներշնչուած Աստուծոյ սիրով և իրենց ազգակիցին սիրով, այսօր ի վիճակի են բարեկարգելու մեր երկրին կեանքը, ճշմարիտ սրբութիւն մը սփռելով՝ մեր երկրի մէջ խաղաղ ու արդար կեանքի մը հաստատման ի խնդիր:

Թող ուրեմն Հայաստանը աճի...: Թող ան աճի որպէս հոգիի Հայաստան, իր պատմութեան լաւագոյն տարիներու գծով, այնպէս ինչպէս աճեցաւ ան՝ Տրդատ թագաւորի և Գրիգոր Լուսաւորչի տարիներուն, ուր գտնուեցաւ ճշմարտապէս սրբութեան մէջ, իր ամէնէն բարձր բարոյական ու հոգևոր արտայայտութեամբ:

Հաստատ հիմքերով նոր երկիր մը կառուցելու համար, բաւական չէ անշուշտ միայն կոչ ուղղել տնտեսական նպատակներով, որոնք երբեմն մարդերը իրարու քով կը բերեն. և երբեմն ալ՝ իրարմէ կը բաժնեն: Առաւելաբար պէտք է կռթնիլ վաւերական արժէքներու վրայ, որոնք իբրև հիմք ունին տիեզերական բարոյական օրէնքը, արձանագրուած մարդ էակի սրտին մէջ: Երկիր մը՝ որ ազատութեան արժէքները և ընդհանուր յարգանքը երբ փոխարինէ բարոյական անտարբերութեամբ, կրնայ գտնուիլ վտանգաւոր արկածախնդրութիւններու առջև, և կրնայ նոր ու անսպասելի դժուարութիւններու հանդիպիլ:

Նման վտանգներու պարագային՝ քրիստոնէութեան դերը, որ լուսաւոր հորիզոններ կը գծէ, կը դառնայ աւելի կենսական՝ քան երբեք, մանաւանդ մեր օրերուն:

Գարեգին Բ. Վեհափառ Հայրապետի ուսերուն վրայ ծանր պարտականություն դրուած է, որովհետև այն բազմակեդրոն դժուարութիւնները, որոնց առջև կը գտնուի Հայ Եկեղեցին և Հայաստան աշխարհը, կը նային Ամենայն Հայոց Կաթողիկոսին այսօր:

Վեհափառը բարեբախտաբար երիտասարդ է, ոյժը ունի յաղթալարելու այդ դժուարութիւնները, և մանաւանդ երբ վայելելու է միաբանակից իր եղբայրներու սերն ու համագործակցութիւնը: Անոր վարչական գործունէութեան մասին բազմիցս խօսուած ու գրուած է. յիշենք օրինակի համար Վազգէնեան Դպրանոցը, Հայորդեաց Տունները, Բարեգործական ճաշարանները և վանքերու վերաշինութիւնները, և մենք յոյս ունինք Աստուծով, որ ան իր գահակալութեան ընթացքին առաւել ևս ձեռնամուխ պիտի ըլլայ Հայ Առաքելական Եկեղեցւոյ բարեկարգման աշխատանքներուն: Քանզի այս խնդիրներու բովէն անցնելով կախուած է գիտամշակութային, առաւել ևս հաւատքի վերաբերեալ խնդիրներու առաջադրութիւնը՝ քարոզչական բարձր մակարդակի վրայ, թէ՛ Հայաստանի և թէ՛ Սփիւռքի մէջ:

1700-ամեակի տօնակատարութեանց հանդիսութիւնները պիտի նպաստեն դիրացնելու Վեհափառին առաքելութեան ծրագիրները: Գարեգին Բ. Կաթողիկոսը լաւ և մօտէն կը ճանչնայ աղանդաւորներու խնդիրը, որոնք տարածուած են Հայաստան աշխարհի մէջ, ինչպէս նաև Սփիւռքի պարագային՝ ծանօթ է անտարբերութեան վիճակին, և այդ ուղղութեամբ վստահաբար քայլեր ձեռք պիտի առնէ:

Ոստումը՝ զոր Գարեգին Բ. Կաթողիկոսին վիճակուեցաւ կատարելու, 20-րդ դարէն դէպի 21-րդ դար, մաղթենք որ ըլլայ Մայր Աթոռ Ս. Էջմիածնի համար անսասանութեան, բարօրութեան և բարեկարգութեան դար, իսկ Հայաստանի համար՝ խաղաղութեան, հարստութեան և արդարութեան: Աշխարհով մէկ սփռուած մեր ժողովուրդին համար ալ՝ քրիստոնէական հաւատքի հաստատման և վերազարթօնքի դար:

